ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԱՊՁԲ-4/1-1

ք. Երևան 25.04.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ.Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից, և «Արպանիվ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խանդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝
ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.
բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.
գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝
ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,
բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝
ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.
բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.
գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 246085800 (երկու հարյուր քառասունվեց միլիոն ութսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին

(լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության

համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏՎ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈւ սպառազինության վարչությունը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| **ՀՀ պաշտպանության նախարարություն** | **«Արպանիվ» ՍՊԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ ք. Երևան, Նար Դոսի 122 |
| ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն | «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ |
| Հ/հ 900011144079 | Հ/Հ 21700002119584001 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 09209297 |
| ՀՀ ՊՆՆՏՎ դեպարտամենտի պետի ՊԺԿ | տնօրեն |
| **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ** | **Լ. ԽԱՆԴԱՆՅԱՆ** |

*Հավելված N 1*
*ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1-1 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չ/Հ | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագրերը |
| 1 | Անվադող 175/70R13 | ***И-391*** | ***АО ПО "Алтайский шинный комбинат*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը համաեղոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- H(210) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-82<br>Անվադողի բեռնվածությունը- 475 կգ<br>Չափման Միավոր-հատ<br>***նախատեսված ՎԱԶ-2106, 2107 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 2 | Անվադող 185/65R14 | ***CITYTOUR*** | ***"POWERTRAC"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը համաեղոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- H(210) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-86<br>Անվադողի բեռնվածությունը- 530 կգ<br>Չափման Միավոր-հատ<br>***նախատեսված ՎԱԶ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 3 | Անվադող 205/70R14 | ***VS-1*** | ***ОАО "Волтайр-Пром"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը համաեղոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- S(180) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-95<br>Անվադողի բեռնվածությունը- 690 կգ<br>Չափման Միավոր-հատ<br>***նախատեսված ԳԱԶ-31029 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 4 | Անվադող 205/70R15 | ***CITYTOUR*** | ***"POWERTRAC"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը համաեղոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- T(190) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-96<br>Անվադողի բեռնվածությունը- 710 կգ<br>Չափման Միավոր-հատ<br>***նախատեսված ԳԱԶ-3102, 3110 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 5 | Անվադող 205/70R16 | ***NORTEC WT 580*** | ***АО ПО "Алтайский шинный комбинат"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը համաեղոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- Q(160) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-97<br>Անվադողի բեռնվածությունը- 730 կգ<br>Չափման Միավոր-հատ<br>նախատեսված ՎԱԶ-2121 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար |
| 6 | Անվադող 235/75R15 | ***Forward Professional 520*** | ***АО ПО "Алтайский шинный комбинат"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը համաեղոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- S(180) կմ/ժ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Անվադողի բեռնվածության ինդեքսը-105<br>Անվադողի բեռնվածությունը- 925 կգ<br>Չափման Միավոր-հատ<br>***նախատեսված ՎԱԶ-212140/BRONTO մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 7 | Անվադող 215/90-15C | ***Я-245*** | ***ОАО "Омскшина"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը* ունիվերսալ,<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- K(110) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-99<br>Անվադողի բեռնվածությունը- 775 կգ<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>***նախատեսված ՈՒԱԶ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 8 | Անվադող 225/75R16 | ***Wrangler All-Terrain Adventure*** | ***'GOODYEAR"*** | ***Հարավային Աֆրիկայի Հանրապետություն*** | *Նշանակությունը համասեզոն, ներքին կառուցվածքը-կևլարից (KEVLAR, DuPont.TM)*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- T(190) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-104<br>Անվադողի բեռնվածությունը- 900 կգ<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>***նախատեսված Կիա Սորենտո մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 10 | ***Անվադող 205/75R16C*** | ***MA-W2*** | ***"MAXXIS"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը* ձմեռային,<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- R(170) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-113/111<br>Անվադողի բեռնվածությունը- 1150/1090 կգ<br>Անվադողի շերտայնությունը 10 PR<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>***նախատեսված ԳԱԶելի, Mersedes-Benz մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 12 | Անվադող 195R15C | ***MA-SLW*** | ***"MAXXIS"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը* ձմեռային,<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- Q(160) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-106/104<br>Անվադողի բեռնվածությունը- 950/900 կգ<br>Անվադողի շերտայնությունը 8 PR<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>***նախատեսված Տոյոտա-Հիաս մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 13 | Անվադող 205R16C | ***POWER LANDER A/*** | ***"POWERTRAC"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը համասեզոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- R(170) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-110/108<br>Անվադողի բեռնվածությունը- 1060/1000 կգ<br>Չափման Միավոր- Լրակազմ<br>***նախատեսված Միցուբիշի L-200 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 14 | Անվադող 215/60R16 | ***H220*** | ***"WANLI"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը համասեզոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- V(240) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-95<br>Անվադողի բեռնվածությունը- 690 կգ<br>Չափման Միավոր- հատ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ***նախատեսված Տոյոտա Քեմրի* մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար** |
| 16 | Անվադող 205/60R15 | ***VECTOR 4SEASONS GEN-2*** | ***"GOODYEAR"*** | ***Չինաստան / Սլովենիա*** | *Նշանակությունը համաեղոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- H(210) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-95<br>Անվադողի բեռնվածությունը- 690 կգ<br>Չափման Միավոր- հատ<br>***նախատեսված Տոյոտա-Կառոլլա* մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար** |
| 17 | Անվադող 195/65R15 | ***CITYTOUR*** | ***"POWERTRAC"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը համաեղոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- H(210) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-91<br>Անվադողի բեռնվածությունը- 615 կգ<br>Չափման Միավոր- հատ<br>***նախատեսված ՀՅՈՒՆԴԱՒ-ԷԼԱՆՏՐԱ, ԿԻԱ-ՍԵՌԱՏՈ, ԳԱԶ-3110* մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար** |
| 18 | Անվադող 195/65R15 | ***CORDIANT_WINTER DRIVE, PW-1*** | ***"CORDIANT"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը* ձմեռային,<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- T(190) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-91<br>Անվադողի բեռնվածությունը- 615 կգ<br>Չափման Միավոր- հատ<br>***նախատեսված ՀՅՈՒՆԴԱՒ-ԷԼԱՆՏՐԱ, ԿԻԱ-ՍԵՌԱՏՈ, ԳԱԶ-3110* մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար** |
| 19 | Անվադող 205/55R16 | ***CITYRACING*** | ***"POWERTRAC"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը համաեղոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- H(210) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-94<br>Անվադողի բեռնվածությունը- 670 կգ<br>Չափման Միավոր- հատ<br>***նախատեսված ՀՅՈՒՆԴԱՒ-ԷԼԱՆՏՐԱ, ԿԻԱ-ՍԵՌԱՏՈ* մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար** |
| 21 | ***Անվադող 225/65R17*** | ***HT-770*** | ***"MAXXIS"*** | ***Թայվան*** | *Նշանակությունը համաեղոն,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- H(210) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-102<br>Անվադողի բեռնվածությունը- 850 կգ<br>Չափման Միավոր- հատ<br>***նախատեսված ՋԻՊ ՍՈՒԶՈՒԿԻ ԳՐԱՆՏ-ՎԻՏԱՐԱ, ՏՈՅՈՏԱ ՌԱՎ-4* մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար** |
| 24 | Անվադող 275/65R17 | ***AT-771*** | "MAXXIS" | ***Թայվան*** | *Նշանակությունը համաեղոն,*<br>*Անվադողի սահմանելի արագության ինդեքսը-T(190) կմ/ժ*<br>*Անվադողի բեռնվածության ինդեքսը-115*<br>*Անվադողի բեռնվածությունը-1215 կգ*<br>*Չափման Միավոր-հատ*<br>*Նախատեսված ՋԻՊ, ԼԵՔՍԻՈՒՍ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար* |
| 25 | Անվադող 285/60R18 | ***AT-771*** | "MAXXIS" | ***Չինաստան*** | Նշանակությունը համաեղոն,<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը-T(190) կմ/ժ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Անվադողի բեռնվածության ինդեքսը-116<br>Անվադողի բեռնվածությունը-1250 կգ<br>Չափման Միավոր-հատ<br>Նախատեսված ՋԻՊ ԼԱՆԴ ԿՌՈՒԶԵՌ ՊՐԱԴՈ, ՄԻՑՈՒԲԻՇԻ ՊԱՋԵՌՈ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար |
| 26 | Անվադող 235/55R19 | ***HP-M3*** | ***"MAXXIS"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը համաեղան,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- V(240) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-105<br>Անվադողի բեռնվածությունը- 925 կգ<br>Չափման Միավոր- հատ<br>***նախատեսված ՇԵՎՐՈԼԵ-ԿԱՊՏԻՎԱ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 27 | Անվադող 235/55R19 | ***SS-01*** | ***"MAXXIS"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը* ձմեռային,<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- Q(160) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-105<br>Անվադողի բեռնվածությունը- 925 կգ<br>Չափման Միավոր- հատ<br>***նախատեսված ՇԵՎՐՈԼԵ-ԿԱՊՏԻՎԱ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 28 | Անվադող 225/75R16 | ***SNOWTOUR*** | ***"POWERTRAC"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը* ձմեռային,<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- Q(160) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-115/112<br>Անվադողի բեռնվածությունը- 1215/1120 կգ<br>Չափման Միավոր- հատ<br>***նախատեսված Կիա Սորենտո մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 29 | Անվադող 305/40R22 | ***CITYRACING(SUV)*** | ***"POWERTRAC"*** | ***Չինաստան*** | *Նշանակությունը համաեղան,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- V(240) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-114<br>Անվադողի բեռնվածությունը-1180 կգ<br>Չափման Միավոր- հատ<br>***նախատեսված Ռենջ-ռովեր մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 31 | Անվադող 8.25R20 | ***У-2*** | ***ОАО "Омскшина*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ, դողի կառուցվածքը՝ ռադիալ,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- J(100) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-125/122<br>Անվադողի բեռնվածությունը- 1650/1500 կգ<br>Անվադողի շերտայնությունը 10 PR<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>***նախատեսված ԳԱԶ-53, ՊԱԶ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար*** |
| 32 | Անվադող 9.00R20 | ***И-Н142Б-1*** | ***ОАО "Омскшина"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ, դողի կառուցվածքը՝ ռադիալ,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- J(100) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-140/137 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Անվադողի բեռնվածությունը- 2500/2300 կգ<br>Անվադողի շերտայնությունը 14 PR<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>**նախատեսված ԿամԱԶ-5320, ԶԻԼ-130մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար** |
| 33 | ***Անվադող 400/80-533 (1220x400-533)*** | ***И-П184*** | ***ОАО "Омскшина"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը պահպանաշերտի գծանկարը-բարձր անց ողության, դողի կառուցվածքը՝ դիագոնալ,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- G(90) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-142<br>Անվադողի բեռնվածությունը- 2650 կգ<br>Անվադողի շերտայնությունը 10 PR<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>**նախատեսված ԿամԱԶ-4310, 43105 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար** |
| 40 | Անվադող 11.00R20 | ***И-111АМ*** | ***ОАО "Омскшина"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը պահպանաշերտի գծանկարը-ճանապարհային,*դողի կառուցվածքը՝ ռադիալ,<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- K(110) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-150/146<br>Անվադողի բեռնվածությունը- 3350/3000 կգ<br>Անվադողի շերտայնությունը 16 PR<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>**նախատեսված ԿԱՄԱԶ, ՄԱԶ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար** |
| 41 | Անվադող 12.00R20 | ***ИД-304М,У-4*** | ***ОАО "Омскшина"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ, դողի կառուցվածքը՝ ռադիալ,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- J(100) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-154/149<br>Անվադողի բեռնվածությունը-3750/3250 կգ<br>Անվադողի շերտայնությունը 18 PR<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>**նախատեսված ՄԱԶ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար** |
| 42 | Անվադող 1300x530-533 | ***ВИ-3*** | ***ОАО "Омскшина"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը պահպանաշերտի գծանկարը-բարձր անց ողության, դողի կառուցվածքը՝ դիագոնալ,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- B(50) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-173<br>Անվադողի բեռնվածությունը- 6500 կգ<br>Անվադողի շերտայնությունը 16 PR<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>**նախատեսված ԿՐԱԶ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար** |
| 43 | Անվադող 28x9-15 | ***NHS VOLTYRE HEAVY DT-121*** | ***ОАО "Волтайр-Пром"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը պահպանաշերտի գծանկարը-հատուկ ամբարձիչի,*<br>Անվադողի սահմանելի արագության ինդեքսը- A3(15) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-148<br>Անվադողի բեռնվածությունը- 3150 կգ<br>Անվադողի շերտայնությունը 12 PR |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Չափման Միավոր-Լրակազմ<br>*նախատեսված հարում տեխնիկայի* համար |
| 44 | Անվադող 7.50-20 | ***ИЯ-112А*** | ***ОАО "Омскшина"*** | ***Ռուսաստան*** | *Նշանակությունը պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ, դողի կառուցվածքը՝ դիագոնալ,*<br>Անվադողի սահմանեի արագության ինդեքսը- J(100) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-119/116<br>Անվադողի բեռնվածությունը-1360/1250 կգ<br>Անվադողի շերտայնությունը 8 PR<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>***նախատեսված կցորդիչ ականադիր (ՊՄՁ-4)-ի* համար** |
| 45 | Անվադող 1500x600-635 | ***ВИ-203*** | ***"Белшина"*** | ***Բելառուսի Հանրապետություն*** | *Նշանակությունը պահպանաշերտի գծանկարը-բարձր անց ողության, դողի կառուցվածքը՝ դիագոնալ,*<br>Անվադողի սահմանեի արագության ինդեքսը- D(65) կմ/ժ<br>Անվադողի բեռնվածության ինդեքսը-154<br>Անվադողի բեռնվածությունը- 3750 կգ<br>Անվադողի շերտայնությունը 14 PR<br>Չափման Միավոր-Լրակազմ<br>***նախատեսված ՄԱԶ-543-ի* համար** |

Ծանոթություն.

| |
|---|
| 1. Անվադողի համալրվածությունը լրակազմով՝ խցավոր, անվախուցը փականով՝ նախատեսված ըստ անվադողի չափի, իսկ հատի դեպքում՝ առանց անվախուցի: |
| 2. Այն անվադողերը, որոնց տեխնիկական բնութագրերով նշված է "համասեզոն" կամ "ձմեռային" նշանակության, անվադողերի վրա պետք է նշված լինեն նաև "համասեզոն" նշանակության և "ձմեռային" նշանակության տարբերանշանները (մակնշումները), այդ թվում համապատասխանաբար՝ "M+S, M&S, all season" և " * " (ձյան փաթիլի նախշանկար): |
| 3. Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2017թ-ից: |
| 4. Ապրանքի որակավորման փուլում մասնակիցների կողմից ներկայացվեն մատակարարվող անվադողի անվանումը/բրենդը (ինչը հետագայում պետք է մատակարարվի և նշվի պայմանագրում) և մատակարարման (ընդունման) ժամանակ ներկայացնել մուտքագրվող անվադողի համապատասխանության վերաբերյալ սերտիֆիկատը, բացառությամբ N42՝ 1300x530-533, N43՝ 28x9-15, N44՝ 7.50-20 և N45՝ 1500x600-635 չափաբաժիններով ներկայացված անվադողերի համար կիրառելի է նաև տեխնիկական բնութագրով նշված տեխնիկական ցուցանիշներին համապատասխան որակի վերաբերյալ անձնագիր՝ տրված արտադրող գործարանի կողմից: |
| 5. Անվադողերի երաշխիքային ժամկետը տեղադրման պահից սկսած 1 տարի կամ 5000կմ վազք աշխատատևողությամբ: |
| 6. Մատակարարված անվադողերի ժամանակից շուտ շարքից դուրսգալու դեպքում, բողոքարկման (ռեկլամացիոն) աշխատանքները կազմակերպել ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության (զորամասի, ստորաբաժանման) և մատակարար կազմակերպության մասնագետների անմիջական մասնակցությամբ, տեխնիկական խոտանի դեպքում վերականգնումը մատակարարող կազմակերպության կողմից նմանատիպ ապրանքով՝ նախապես հաշվի առնելով ժամանակից շուտ շարքից դուրս գալու պատճառները, մնացած դեպքերում ըստ ուսումնասիրությունների արդյունքների: |
| 7. Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված: |
| 8. Ապրանքները պետք է հանձնվեն Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Եղվարդի խճ. ՀՀ ՊՆ 84029 զորամաս: |

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագրերը |
| 46 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-45 | Fire Ball Power | ***ИСТОК+, ISTA*** | **Ռուսաստան, ՈՒկրաինա** | *Կապարաթթվային կուտակիչի տեսակը-6US-45*<br>Նոմինալ ունակությունը /Ա/ժ (թույլատրելի շեղումը +5%)-45 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Լարումը -12 Վ<br>Լիցքաթափման հոսանքը -18 ºC-ի դեպքում-330 EN<br>Սեղմակները ըստ ստանդարտի- կոնաձև<br>Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը +/-5%)<br>Երկարությունը-207<br>Լայնությունը-175<br>Բաձրությունը-190<br>Բռնակի ձևը-1P կամ 2P<br>Կափարիչի ձևը- Միաձույլ<br>Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը-2կգ<br>Չափման Միավոր-հատ |
| 47 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-60 | Fire Ball Power | ***ИСТОК+*, ISTA** | **Ռուսաստան, ՈՒկրաինա** | *Կապարաթթվային կուտակիչի տեսակը-6US-60*<br>Նոմինալ ունակությունը /Ա/Ժ (թույլատրելի շեղումը +5%)-60<br>Լարումը -12 Վ<br>Լիցքաթափման հոսանքը -18 ºC-ի դեպքում-480 EN<br>Սեղմակները ըստ ստանդարտի- կոնաձև<br>Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը +/-5%)<br>Երկարությունը-242<br>Լայնությունը-175<br>Բաձրությունը-190<br>Բռնակի ձևը-1P կամ 2P<br>Կափարիչի ձևը- Միաձույլ<br>Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը-2.1կգ<br>Չափման Միավոր-հատ |
| 48 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-66 | Fire Ball Power | ***ИСТОК+*, ISTA** | **Ռուսաստան, ՈՒկրաինա** | *Կապարաթթվային կուտակիչի տեսակը-6US-66*<br>Նոմինալ ունակությունը /Ա/Ժ (թույլատրելի շեղումը +5%)-66<br>Լարումը -12 Վ<br>Լիցքաթափման հոսանքը -18 ºC-ի դեպքում-540 EN<br>Սեղմակները ըստ ստանդարտի- կոնաձև<br>Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը +/-5%)<br>Երկարությունը-276<br>Լայնությունը-175<br>Բաձրությունը-190<br>Բռնակի ձևը-1P կամ 2P<br>Կափարիչի ձևը- Միաձույլ<br>Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը-2.4կգ<br>Չափման Միավոր-հատ |
| 49 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-70 | Fire Ball Power | ***ИСТОК+*, ISTA** | **Ռուսաստան, ՈՒկրաինա** | *Կապարաթթվային կուտակիչի տեսակը-6US-70*<br>Նոմինալ ունակությունը /Ա/Ժ (թույլատրելի շեղումը +5%)-70-77<br>Լարումը -12 Վ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Լիցքաթափման հոսանքը -18 $^{0}C$-ի դեպքում-600 EN<br>Սեղմակները ըստ ստանդարտի- կոնաձև<br>Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը +/-5%)<br>Երկարությունը-276<br>Լայնությունը-175<br>Բաձրությունը-190<br>Բռնակի ձևը-1P կամ 2P<br>Կափարիչի ձևը- Միաձույլ<br>Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը-2.5 կգ<br>Չափման Միավոր-հատ |
| 50 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-70 | Fire Ball Power | ***ИСТОК+*, ISTA** | **Ռուսաստան, ՈՒկրաինա** | *Կապարաթթվային կուտակիչի տեսակը-6US-70*<br>Նոմինալ ունակությունը /Ա/ժ (թույլատրելի շեղումը +5%)-70-77<br>Լարումը -12 Վ<br>Լիցքաթափման հոսանքը -18 $^{0}C$-ի դեպքում-600 EN<br>Սեղմակները ըստ ստանդարտի- կոնաձև<br>Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը +/-5%)<br>Երկարությունը-276<br>Լայնությունը-175<br>Բաձրությունը-190<br>Բռնակի ձևը-1P կամ 2P<br>Կափարիչի ձևը- Միաձույլ<br>Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը-2.5 կգ<br>Չափման Միավոր-հատ |
| 51 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-75 | Fire Ball Power | ***ИСТОК+*, ISTA** | **Ռուսաստան, ՈՒկրաինա** | *Կապարաթթվային կուտակիչի տեսակը-6US-75*<br>Նոմինալ ունակությունը /Ա/ժ (թույլատրելի շեղումը +5%)-75<br>Լարումը -12 Վ<br>Լիցքաթափման հոսանքը -18 $^{0}C$-ի դեպքում-650 EN<br>Սեղմակները ըստ ստանդարտի- կոնաձև<br>Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը +/-5%)<br>Երկարությունը-276<br>Լայնությունը-175<br>Բաձրությունը-190<br>Բռնակի ձևը-1P կամ 2P<br>Կափարիչի ձևը- Միաձույլ<br>Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը-2.7 կգ<br>Չափման Միավոր-հատ |
| 52 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-90 | Fire Ball Power | ***ИСТОК+*, ISTA** | **Ռուսաստան, ՈՒկրաինա** | *Կապարաթթվային կուտակիչի տեսակը-6US-90*<br>Նոմինալ ունակությունը /Ա/ժ (թույլատրելի շեղումը +5%)-90<br>Լարումը -12 Վ<br>Լիցքաթափման հոսանքը -18 $^{0}C$-ի դեպքում-700 EN |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Սեղմակները ըստ ստանդարտի- կոնաձև<br>Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը +/-5%)<br>Երկարությունը-353<br>Լայնությունը-175<br>Բարձրությունը-190<br>Բռնակի ձևը-1P կամ 2P<br>Կափարիչի ձևը- Միաձույլ<br>Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը-3.2 կգ<br>Չափման Միավոր-հատ |
| 53 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-100 | Fire Ball Power | ***ИСТОК+***, **ISTA** | **Ռուսաստան, ՈՒկրաինա** | *Կապարաթթվային կուտակիչի տեսակը-6US-100*<br>Նոմինալ ունակությունը /Ա/ժ (թույլատրելի շեղումը +5%)-100<br>Լարումը -12 Վ<br>Լիցքաթափման հոսանքը -18 °C-ի դեպքում-850 EN<br>Սեղմակները ըստ ստանդարտի- կոնաձև<br>Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը +/-5%)<br>Երկարությունը-353<br>Լայնությունը-175<br>Բարձրությունը-190<br>Բռնակի ձևը-1P կամ 2P<br>Կափարիչի ձևը- Միաձույլ<br>Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը-3.5 կգ<br>Չափման Միավոր-հատ |
| 54 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-120 | Fire Ball Power | ***ИСТОК+***, **ISTA** | **Ռուսաստան, ՈՒկրաինա** | *Կապարաթթվային կուտակիչի տեսակը-6US-120*<br>Նոմինալ ունակությունը /Ա/ժ (թույլատրելի շեղումը +5%)-120<br>Լարումը -12 Վ<br>Լիցքաթափման հոսանքը -18 °C-ի դեպքում-720 EN<br>Սեղմակները ըստ ստանդարտի- կոնաձև<br>Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը +/-5%)<br>Երկարությունը-513<br>Լայնությունը-189<br>Բարձրությունը-223<br>Բռնակի ձևը-2W<br>Կափարիչի ձևը- Միաձույլ<br>Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը-4.8կգ<br>Չափման Միավոր-հատ |
| 55 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-132 | Fire Ball Power | ***ИСТОК+***, **ISTA** | **Ռուսաստան, ՈՒկրաինա** | *Կապարաթթվային կուտակիչի տեսակը-6US-132*<br>Նոմինալ ունակությունը /Ա/ժ (թույլատրելի շեղումը +5%)-132<br>Լարումը -12 Վ<br>Լիցքաթափման հոսանքը -18 °C-ի դեպքում-880 EN<br>Սեղմակները ըստ ստանդարտի- կոնաձև |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը +/-5%)<br>Երկարությունը-513<br>Լայնությունը-175<br>Բարձրությունը-223<br>Բռնակի ձևը-2W<br>Կափարիչի ձևը- Միաձույլ<br>Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը-5 կգ<br>Չափման Միավոր-հատ |
| 56 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-140 | Fire Ball Power | ***ИСТОК+***, ISTA | **Ռուսաստան, ՈՒկրաինա** | *Կապարաթթվային կուտակիչի տեսակը-6US-140*<br>Նոմինալ ունակությունը /Ա/ժ (թույլատրելի շեղումը +5%)-140<br>Լարումը -12 Վ<br>Լիցքաթափման հոսանքը -18 $^{0}$C-ի դեպքում-900 EN<br>Սեղմակները ըստ ստանդարտի- կոնաձև<br>Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը +/-5%)<br>Երկարությունը-513<br>Լայնությունը-189<br>Բարձրությունը-223<br>Բռնակի ձևը-2W<br>Կափարիչի ձևը- Միաձույլ<br>Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը-6 կգ<br>Չափման Միավոր-հատ |

| |
|---|
| Ծանոթություն:1P- 1 (մեկ) հատ պլաստմասե բռնակ, 2P- 2 (երկու) հատ պլաստմասե բռնակ, 2W- 2 (երկու) պարանե բռնակ: |
| 1. Կուտակիչ մարտկոցները ըստ տեսակների մատակարարել չոր չլիցքավորված վիճակում, արտադրության տարեթիվը սկսած 2018 թ հունվարի 1-ից: Ընթացիկ անհրաժեշտությունից ելնելով, համապատասխան քանակի (պայմանագրով նախատեսված քանակից ոչ ավելի) և տեսակի չոր չլիցքավորված կուտակիչ մարտկոցները մատակարար ընկերության կողմից լիցքավորել և սպասարկել կամ մատակարարել լիցքավորված վիճակում՝ ըստ պատվիրատուի պահանջի (ըստ պայմանավորվածության): Լիցքավորված կուտակիչ մարտկոցների մատակարարման դեպքում ծծմբական թթու չի պահանջվում: |
| 2. <u>Չոր չլիցքավորված</u> կուտակիչ մարտկոցների (յուրաքանչյուր կուտակիչ մարտկոցի համար ըստ վերընշված քանակի) համապատասխան քանակի ծծմբական թթուն (1,23 խտության) մատակարարել 20 լ-ոց տարրաներով՝ ըստ ընդհանուր մատակարարվող համապատասխան քանակների, ավել քանակության ծծմբական թթուն կարող է մատակարարվել այլ տարաներով: |
| 3. Ըստ մատակարարի նախապես ներկայացված պահանջի, դատարկ տարաները խմբաքանակներով հետ կվերադարձվեն՝ համապատասխան քանակի ծծմբական թթուն օգտագործելուց հետո: |
| 4. Կուտակիչ մարտկոցների համար անհրաժեշտ երաշխիքային պայմանները: |
| 4.1 Սահմանված կարգով պայմանների պահպանման դեպքում՝ <u>չոր չլիցքավորված</u> կուտակիչ մարտկոցների երաշխիքային պահպանման ժամկետը պետք է լինի 5 տարի, աշխատանքային վիճակի բերված կուտակիչ մարտկոցների երաշխիքային շահագործման ժամկետը պետք է լինի 2 տարի, ժամկետը սկսվում է էլեկտրալուծույթը մարտկոցների մեջ լցնելու պահից, որոնց հաշվառումը տարվում է ՀՀ ԶՈՒ համապատասխան զորամասերում: |
| 4.2 Մատակարարման ենթակա, աշխատանքային վիճակի բերված կուտակիչ մարտկոցները պետք է ունենան նվազագույնը 4 տարի կամ 75000կմ վազք շահագործման աշխատունակության ժամկետ: |
| 5. Ըստ տեսակի համապատասխան բևեռականությամբ կուտակիչ մարտկոցները մատակարարել (կամ փոխարինել՝ ուղիղ կամ հակառակ) ըստ պայմանավորվածության՝ քանակները նախապես համաձայնեցվում են ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության հետ: |
| 6. Բողոքարկման (ռեկլամացիոն) աշխատանքները կազմակերպել ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության (զորամասի, ստորաբաժանման) և վաճառող կազմակերպության |

| |
|---|
| անմիջական մասնակցությամբ, այդ թվում ներառյալ վերանորոգում կամ վերականգնում նմանատիպ առարկայով (երաշխիքով)՝ հաշվի առնելով անսարքության պատճառները: |
| 7. Յուրաքանչյուր կուտակիչ մարտկոցի հետ առկա լինի հայերեն լեզվով տեխնիկական անձնագիրը, որի մեջ մատչելի կերպով արտացոլված լինի կուտակիչ մարտկոցի լիցքավորման կարգը, տեխնիկական պարամետրերը, սպասարկման կարգը՝ մշտապես և ոչ մշտապես օգտագործման դեպքում, չոր լիցքավորված, չոր չլիցքավորված և լիցքավորված կուտակիչ մարտկոցների երկարատև ու կարճատև պահպանման կարգը, էլեկտրալուծույթի ծավալի նվազեցման դեպքում ծավալի վերականգնման կարգը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն: |
| 8. Ապրանքի որակավորման փուլում մասնակիցների կողմից ներկայացվեն մատակարարվող կուտակիչ մարտկոցի անվանումը/բրենդը (ինչը հետագայում պետք է մատակարարվի և նշվի պայմանագրում), իսկ մատակարարման (ընդունման) ժամանակ ներկայացնել մուտքագրվող կուտակիչ մարտկոցի արտադրողի համապատասխանության վերաբերյալ սերտիֆիկատը կամ դեկլարացիան, որտեղ արտացոլվի որակը հավաստող ու տեխնիկական բնութագրով նախատեսված տեխնիկական ցուցանիշները: |
| 9. Կուտակիչ մարտկոցները պետք է լինեն նոր և չօգտագործված: |
| 10. Ապրանքները պետք է հանձնվեն Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Եղվարդի խճ. ՀՀ ՊՆ 84029 զորամաս: |

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ պաշտպանության նախարարություն**

ՀՀ ՊՆՆՏՍԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

**Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Արփանիվ» ՍՊԸ**

տնօրեն

**Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ**

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ավտոմեքենաների պահեստամասեր

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չափման մ/վ | Քանակը | Միավորի առավելագույն գինը (ՀՀ դրամ) | Ընդամենը (ՀՀ դրամ) | 2018թ գնման ժամանակացույց ըստ եռամսյակների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Անվադողեր, այդ թվում՝** | **դրամ** | **1** | | | **II** | **III** | **IV, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.** |
| 1 | Անվադող 175/70R13 համասեզոն | հատ | 72 | 10798 | 777456 | 32 | 40 | |
| 2 | Անվադող 185/65R14 համասեզոն | հատ | 4 | 12398 | 49592 | 4 | | |
| 3 | Անվադող 205/70R14 համասեզոն | հատ | 4 | 21398 | 85592 | 4 | | |
| 4 | Անվադող 205/70R15 համասեզոն | հատ | 204 | 19398 | 3957192 | 124 | 80 | |
| 5 | Անվադող 205/70R16 համասեզոն | հատ | 108 | 24798 | 2678184 | 80 | 28 | |
| 6 | Անվադող 235/75R15 համասեզոն | հատ | 24 | 28798 | 691152 | 24 | | |
| 7 | Անվադող 215/90-15C | լրակազմ | 384 | 23798 | 9138432 | 184 | 200 | |
| 8 | Անվադող 225/75R16 համասեզոն | հատ | 126 | 69798 | 8794548 | 66 | 60 | |
| 10 | Անվադող 195R16C կամ 205/75R16C ձմեռային | լրակազմ | 12 | 37398 | 448776 | | 12 | |
| 12 | Անվադող 195R15C ձմեռային | լրակազմ | 4 | 35398 | 141592 | | 4 | |
| 13 | Անվադող 205/80 R16C (205R16C) համասեզոն | լրակազմ | 32 | 33398 | 1068736 | 12 | 20 | |
| 14 | Անվադող 215/60R16 համասեզոն | հատ | 12 | 21398 | 256776 | 12 | | |
| 16 | Անվադող 205/60R15 համասեզոն | հատ | 4 | 28798 | 115192 | 4 | | |
| 17 | Անվադող 195/65R15 համասեզոն | հատ | 62 | 15798 | 979476 | 30 | 32 | |
| 18 | Անվադող 195/65R15 ձմեռային | հատ | 70 | 16398 | 1147860 | | 70 | |
| 19 | Անվադող 205/55R16 համասեզոն | հատ | 4 | 19798 | 79192 | 4 | | |
| 21 | Անվադող 225/65R17 համասեզոն | հատ | 4 | 32798 | 131192 | 4 | | |
| 24 | Անվադող 275/65R17 համասեզոն | հատ | 4 | 47798 | 191192 | 4 | | |
| 25 | Անվադող 285/60R18 համասեզոն | հատ | 4 | 65798 | 263192 | 4 | | |
| 26 | Անվադող 235/55R19 համասեզոն | հատ | 4 | 53798 | 215192 | 4 | | |
| 27 | Անվադող 235/55R19 ձմեռային | հատ | 4 | 57798 | 231192 | | 4 | |
| 28 | Անվադող 225/75R16 ձմեռային | հատ | 36 | 33798 | 1216728 | | 36 | |
| 29 | Անվադող 305/40R22 համասեզոն | հատ | 4 | 73798 | 295192 | 4 | | |
| 31 | Անվադող 8.25R20 | լրակազմ | 366 | 47398 | 17347668 | 166 | 200 | |
| 32 | Անվադող 9.00R20 | լրակազմ | 619 | 59398 | 36767362 | 219 | 400 | |
| 33 | Անվադող 400/80-533 (1220x400-533) | լրակազմ | 90 | 164798 | 14831820 | | 90 | |
| 40 | Անվադող 11.00R20 | լրակազմ | 61 | 91798 | 5599678 | | 61 | |
| 41 | Անվադող 12.00R20 | լրակազմ | 40 | 115798 | 4631920 | 20 | 20 | |
| 42 | Անվադող 1300x530-533 | լրակազմ | 30 | 347798 | 10433940 | | 30 | |
| 43 | Անվադող 28x9-15 | լրակազմ | 10 | 59798 | 597980 | 10 | | |
| 44 | Անվադող 7.50-20 (220-508) | լրակազմ | 30 | 54798 | 1643940 | 30 | | |
| 45 | Անվադող 1500x600-635 | լրակազմ | 30 | 1288798 | 38663940 | 30 | | |
| | **Կուտակիչ մարտկոցներ, այդ թվում՝** | **դրամ** | **1** | | | | | |
| 46 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US45 | հատ | 8 | 24398 | 195184 | 8 | | |
| 47 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US60 | հատ | 649 | 24398 | 15834302 | 149 | 200 | 300 |
| 48 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US66 | հատ | 58 | 28398 | 1647084 | 28 | | 30 |
| 49 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US70/ուղիղ | հատ | 15 | 31798 | 476970 | 5 | | 10 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 50 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US70/հակառակ | հատ | 5 | 31798 | 158990 | 5 | | |
| 51 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US75 | հատ | 357 | 31798 | 11351886 | 57 | 100 | 200 |
| 52 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US90 | հատ | 721 | 37798 | 27252358 | 121 | 250 | 350 |
| 53 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US100 | հատ | 18 | 39798 | 716364 | 18 | | |
| 54 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US120 | հատ | 30 | 58798 | 1763940 | 30 | | |
| 55 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US132 | հատ | 81 | 60798 | 4924638 | 21 | 20 | 40 |
| 56 | Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US140 | հատ | 296 | 61798 | 18292208 | 96 | 100 | 100 |

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ պաշտպանության նախարարություն**

ՀՀ ՊՆՆՏՄ դեպարտամենտի պետի ՊԺԿ

**Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Արփանիվ» ՍՊԸ**

տնօրեն

**Մ. [illegible]**

*Հավելված N 2*
***ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -4/1-1*** *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ծառայության անվանում | CPV-ի կոդը՝ | Չափի միավորը | Քանակ | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Ավտոմեքենաների պահեստամասեր (Անվադողեր) | 34331300/3 | դրամ | 1 | 81735938 | 81735938 | 81735938 | 163471876 | 163471876 | 163471876 | 163471876 | 163471876 | 163471876 |
| 2 | Ավտոմեքենաների պահեստամասեր (Կուտակիչ մարտկոցներ) | 34331300/1 | դրամ | 1 | 20653481 | 20653481 | 20653481 | 45437658 | 45437658 | 45437658 | 82613924 | 82613924 | 82613924 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ պաշտպանության նախարարություն**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Արպանիվ» ՍՊԸ**
տնօրեն
[illegible]ԱՆԴԱՆՅԱՆ

*Հավելված N 3*
***ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -4/1-1*** *ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| ______________________________ | ______________________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «              » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________

Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և Պայմանագրի կողմը՝ ի դեմս______________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «______________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Գնորդ) և
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ____________________________ -ին կնքված N
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց** **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________ ________________________
ազգանուն, անուն ազգանուն, անուն

________________________ ________________________
Ստորագրություն ստորագրություն